

ԴԱՆԻՆԸ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԼԵՉՎԱԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

ՅՈՒ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Լեզվագեղագիտականը ենթադրվում է գեղագիտականի համակարգում այնքանով, որքանով մնում է գեղարվեստական տեքստի բնորոշման սահմաններում և այնչափով, որչափով բնորոշումն ինքնին միտում է բովանդակության հետ լեզվագեղարվեստական հատկանիշների ու արժեքների բացահայտումին: Վերջինս արևելահայ (այսպես՝ խորհրդահայ) գրականագիտության ընդգծված հակումը չի եղել գաղափարախոսությանը տրված հետաքրքրություններից դուրս կամ նույնիսկ դրանց զուգահեռ: Սակայն Դանինը Վարուժանի պարագան հիմնականում դուրս չէ այդ հաստատումից: Վարուժանի գեղագիտական հայացքներում լեզվագեղագիտականի դիտարկումը կատարվել է վերը նշված առարկայական (օբյեկտիվ) շափումների սահմաններում և՛ այդքանով, մանավանդ որ դա նպատակ չի եղել:

Մյուս կողմից՝ արևելահայ գեղարվեստական գրականության, այլև առանձին հեղինակների լեզվին մերօրյա լեզվաբանության (ոճաբանության) տուրքն անսահման է մյուս հատվածի նույն արժեքների նկատմամբ ծավալվող հիացումից²: Դ. Վարուժանի պարագան դուրս է նաև այդ «միտումնավոր» լեզվագիտության փորձից՝ շնայած միանգամայն պարտադրող գործոններին: Արևմտահայ գրական և գեղարվեստական լեզվի զարգացման ընթացքին Վարուժանի բերած նպաստը կարևորվում է կրկնակ առումներով՝ միևնույն գամայն ուշագրավ տեսական հայացքների համակարգով և դրանց բանաստեղծական բարձրարվեստ կիրարկմամբ³:

Լեզվի, մասնավորապես հայոց լեզվի մասին Դ. Վարուժանի արտահայտած կարծիքները (հողվածներ, գրախոսություններ, դասախոսություններ և այլն) հատուկտոր և առանձնակի դրսևորումներ չեն, այլ ներկայացնում են մի ամբողջական համակարգ՝ լեզվաբանական և գեղագիտական թելադրությունների միասնության մեջ:

Ի դեպ, լեզվի մասին այս կամ այն հեղինակի հայացքներում լեզվաբա-

¹ Նկատի ունենք Դ. Վարուժանին Ալիքված գրականագիտական քննության ուսումնասիրություններն ու հողվածները, որոնք հեղինակել են Վ. Գաբրիելյանը, Հ. Ռշտունին, Գ. Մադոյանը, Էդ. Զրբաշյանը, Հր. Թամրազյանը, Ս. Սարիճյանը, Լ. Մնացականյանը և ուրիշներ:

² Արևելահայ չափածոյի լեզվին Ալիքված հետաքրքրության դիմաց (Ա. Մարգարյան, Միք. Նայրանդյանի լեզվագեղագիտական գործունեությունը, Երևան, 1957, Ռ. Իշխանյան, Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Երևան 1978, Վ. Առաքելյան, Ավ. Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճաբանական առանձնահատկությունները, Երևան, 1954, Ս. Մելքոնյան, Հովհ. Թումանյանը և արևելահայ գեղարվեստական գրականության լեզուն, Երևան, 1986 և այլն) գոնե տպավորվող է նույն հետաքրքրության չզոյությունը արևմտահայ բանաստեղծական լեզվի նկատմամբ:

³ Այս հողվածը Ալիքված է առաջին «առման» քննությանը, երկրորդը առանձին և հատուկ ուսումնասիրության նյութ է:

նական և գեղագիտական «տեսակաների» հակաբերումի՝ լեզվագիտության ավանդած փորձը հազիվ թե սպառում է կամ գեթ արդարացնում վերլուծման ստուգության հնարավորությունները: Հովհ. Թումանյանի լեզվական ժառանգության մեջ հրկու «տեսակաների» առանձնացումը (լեզվի գեղագիտական հարցեր և զուտ լեզվաբանական մաս) չի վրիպում ինքնանպատակ լինելու հանգամանքից, մանավանդ շարդարացվող շեշտադրությամբ՝ «մեզ հետաքրքրողն առաջինն է, անշուշտ»: Այդ ժառանգության մեջ «ամենալեզվաբանական» դիտարկումներն անգամ («Լեզվական փոխառությունները», «էս, էդ, էն-ի մասին», «Վուզ պատասխան Պ. Ա. Մեղրյանին», «Մ. Աբեղյանի ուղղագրության առթիվ») անույշման ունեն նաև գեղագիտական բովանդակություն, նախ, որովհետև ներառում են գերազանցապես գրական նյութը, ապա՝ նոր գրական արևելահայերենի համար բառապաշարային կամ քերականական ձեռքբերումները անմիջականորեն տրվում են գեղարվեստական լեզվի հոլովությունին (սա Թումանյանի պարագային արդեն անվիճելի է), հետո՝ առկա է անհատական-հոգեբանական գործոնը. Թումանյանը էությունաբար ու զգացողությամբ նախ և առաջ գրականության մարդ էր: Եվ վերջապես՝ արևելահայ բանաստեղծության լեզվի փորձաշատ ուսումնասիրողն ինքն էլ չի մերժում իրողությունը՝ թեև շատ երկիմաստ, այսպես կոչված «ելակետային» վերապահությամբ. «Երբ խորն ենք թափանցում լեզվական հարցերի վերաբերյալ Թումանյանի թողած ժառանգության երկու «տեսակաների» մեջ, նկատում ենք, որ բոլոր դեպքերում կա միասնական ելակետ», և ապա՝ «Թումանյանի ելակետը գեղագիտական է եղել...»⁴:

Ելակետը մեկն է, բայց մեկն է նաև միտումը, որ առնվազն անհամոզիչ է դարձնում այդ երկու «տեսակաների» եզրաձևումը գնահատման փորձերում: Առավել ևս, որ գործ ունենք բանաստեղծ անհատականության հետ:

Դանիել Վարուժանի զգացողության ու մտածումի մեջ ամենասերտ հարաբերումի մեջ են լեզվաբանականն ու գեղագիտականը. բառի իմաստաբանական ու ստուգաբանական ճշգրտումները, երկու գրականների (արևմտահայ և արևելահայ) մերձեցումի մտահոգությունները ծառայեցվում են նաև բարձր արվեստի կերտմանը, հայկական հոգեկանության ստեղծմանը, իսկ լեզվի գեղագիտական խնդիրների դիտարկումները իրենց հերթին միտում ունեն նաև կանոնավորելու գրական արևմտահայերենի ընթացքը, հարստացնելու բառապաշարը, լուծելու լեզվաբանական բնույթի ինչ-ինչ խնդիրներ: Երկու դեպքում էլ նպատակը մեկն էր:

Գրական լեզվի նորմավորման ստուգությունը 20-րդ դարի սկզբների արևմտահայ լեզվաբանական և գեղագիտական միտքն ընդունեց որոշ վերապահումներով՝ բարեըջումների մեծ բաժին հատկացնելով հեռանկարին: Պատճառներն անշուշտ պարտադրող էին՝ քաղաքական անհուսալի վիճակ ու քաղաքական հեռանկարի հույսեր, հոգևոր կյանքի անորոշություն և այլն:

Դանիել Վարուժանի լեզվագիտական փորձը դուրս չմնաց այս վերապահումների ազդեցություններից. 1910-ականների գրական արևմտահայերենի նորմավորման ստույգ ընթացքը գնահատվեց զուտպ ու շափավոր հաստատումներով:

Վերը նշված ազդեցություններից բացի այսպիսի մտեցումն ունեք ուշխարհայացքային սկիզբներ, ուր սերտորեն զուգակցված են լեզվաբանական-ազգային-հոգեբանական և գեղագիտական կողմնորոշումները: Հայացքների տեսական-փիլիսոփայական հիմքը դրապաշտությունն է և դրանից բխող կուլտուր-պատմական ուսմունքը, ըստ որի հասարակական-քաղաքական, բայց

⁴ Թ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 261, 266:

նակ մշակութային արժեքների զարգացման յուրահատկությունները ենթակա-
յական են միջավայրի (ժամանակ, կլիմա, աշխարհագրական պայմաններ)
և ազգային «խարակտերի» ազդեցություններին: Տուրքը կուլտուր-պատմական
գեղագիտությանը անվերապահ չէ, սակայն անվերապահ է այդ գեղագիտու-
թյան հիմնական բանաձևումների (մասնավորապես իրողությունները ազգա-
յին հոգեբանության ու պատմական-քաղաքական միջավայրի գործոններով
բացատրելու) շատ որոշակի ազդեցությունը: «Մեր հիմնական կարծիքներն
մեկն այն է,— գրում է Վարուժանը,— որ լեզվի մը բոլոր հատկությունները
ուղիղ կը համեմատին միջավայրի ազդեցության և ժողովրդի մը հոգևոր-քա-
ղաքական շարժումին հետ»⁵:

Սա գնահատումի շահանիշ է ու ելակետ վերլուծությունների, որոնք նե-
րառում են լեզվին, մասնավորապես գրական արևմտահայերենին վերաբերող
ամենատարբեր խնդիրներ:

Այսպես, ըստ Վարուժանի, աշխարհաբարի ձևավորումն ու զարգացումը
շունեցավ բնականոն ընթացք. անշատվելով հիմք բարբառից («Միշնաշխար-
հի լեզվից»), աշխարհաբարը միտեց դեպի գրաբարը, շահավոր ու բարեբար
մշակման ենթարկվեց մի շարք գրողների կողմից, գրաբարից վերցնելով «բու-
ռերու և ոճերու պաշար մը»՝ մասամբ ազատվեց զուտ գրաբարյան լեզվական
ձևերից ու քերականական կառույցներից, սակայն հեռացավ բարբառից՝ հա-
րազատ միջավայրից: Պատճառը, Վարուժանի համոզմամբ, քաղաքական ու
հոգևոր պարտադրանքների մթնոլորտն էր, գավառներում հոգևոր կյանքի ար-
գելակումը:

Աշխարհաբարի հետագա մշակումը շարունակվեց Պոլսի միջավայրում,
ուր դարձյալ մաքրվելով գրաբարյան ձևերից՝ այս անգամ լեզուն խաթարվեց
օտարաբանություններով, «սկսավ օտարանալ և ստրկանալ կարգ մը գրիչ-
ներու տակ», որոնք տաղանդը շունեցան «գոնե զայն պահպանելու համար
այն ձևին մեջ, զոր իրենց հանձնեք էին Պ. Գուրյանի, Գր. Օսյանի և Հ. Պա-
րոնյանի նման շքեղ գրագետներ»: Ավելի տաղանդավորները՝ Գ. Զոհրապ,
Սիպիլ, Մ. Մեծարենց, Իստրա և ուրիշներ, փորձ արեցին զարգացնելու լե-
զուն, դնելու այն մակարդակի վրա, որ կարող էր պատկերել «ֆրանսական
իրապաշտ մտքի նրբությունները և խորհրդապաշտ դպրոցի երանգներն ու
խաղերը», բայց «այդ մշակույթն ալ ուրիշ ուղղություն ուներ», ավելի շատ
դիմում էր գրաբարին և օտարաբանությունների, հեռու էր բնաշխարհ-գավա-
ռից (տե՛ս էջ 121—122):

Լեզուն շարունակեց իր բնականոն զարգացումը. սահմանադրությունը
արտասահմանի հայ գրողների հոսանքը բերեց Պոլիս և արտասահմանի մեջ
մշակված հայ լեզուն՝ կորովի և դասականորեն իրապաշտ շեշտերով, որ ար-
դյունք էր ազատ միջավայրի:

Բայց Վարուժանն այստեղ դարձյալ վեճ ունի: Վարուժանի կարծիքով մեր
ազգային էությունը խորթ չէ օտար ազդեցությունների յուրացումը երբեմն
հարկ եղածից ավելի: Մինչդեռ քաղաքական որոշակի մակարդակի հասած
ժողովուրդը պետք է ձգտի առավել ինքնուրույնության ու ինքնատիպության,
հսկառակ դեպքում «մենք վրա կուտանք ոչ միայն հայ լեզվին տոհմիկ դրոշ-
մը, այլև ցեղային նկարագրին անբռնաբարելի ամբողջականությունը»: Ազ-
գային-հայրենասիրական այս կեցվածքը սկզբունքորեն մերժում է արտա-
սահմանի հայ գրողների, նույնիսկ տաղանդավորների գրչի տակ «ստեպ-
ստեպ սպրդած» այն բացատրությունները, արտահայտություններն ու լեզ-

⁵ Պ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1987, էջ 127: Այսու-
հետև սույն գրքից հղումները կտրվեն շարադրանքի մեջ՝ համապատասխան նշումներով:

վակսն ձևերը, որոնք «բացարձակապես անհաշտ են հայուն արտահայտվելու կերպին և հայ լեզվի ոգվուն»։ «Ծն կը սիրեմ շովինիզմը, հանդեպ իմ լեզվիս ու իմ ինքնուրույնութանս», — իր դիրքորոշումն է բացատրում Վարուժանը (էջ 123)։

Այսպիսով, արևմտահայ գրական աշխարհաբարի ձևավորման և զարգացման, ինչպես նաև «արդի կացության» վերաբերյալ ընդհանրացումները շեն գոհացնում գրական լեզվի հեռանկարին վերաբերող նույն հեղինակի ըստապատմաները։ Ըստ որում, վերլուծություններն արվում են ակնհայտ միտումով ու սկզբունքայնությամբ, գնահատումներում երբեմն շատ որոշակի է ծայրահեղության հասած խստությունը։ Սա, անշուշտ, սոսկ «ազգային-հայրենասիրական կեցվածք» չէր, այլ շատ հստակ դեղագիտական թելադրություն, որ ուրույն համակարգի մեջ է գիտում լեզվի նորմավորման ու գեղագիտական մշակման խնդիրները։

Այսպես, Գուրյան-Օտյան-Պարոնյան խմբի պարագային Գ. Վարուժանը չի վիճարկում այն հարցը, որ նշված «չքեղ գրագետներու» լեզուն, որքան էլ հղկված ու մշակված, հեռու էր կանոնարկված գրական հայերենի «լեզվական» հաղթանակը ներկայացնելու հանգամանքից։ Այդ իրավունքը ըստ էության լռելյայն, բայց անպայման մասամբ, վերապահվում է տաղանդավորների հաջորդ հույլին՝ Զոհրապ, Սիպիլ, Մեծարենց, Ինտրա և ուրիշներ։ Որ այս հեղինակների ստեղծագործություններում արևմտահայ գրական աշխարհաբարը հիմնական օրինաչափություններում արդեն հաստատված ու կանոնակարգված էր (արձակում զուտ գրաբարյան քերականական ձևերից ու կառույցներից դեռևս վերջնականապես չձերբազատված, չափածոյում՝ անհամեմատ հղկված ու մշակված), դա հագիվ թե կարելի է վիճարկել։ Սակայն Գ. Վարուժանը պաշտպանն է լեզվական նորմի առավել խիստ ու խստորոշ պայմանագրականության, և նրա ընդդիմությունը գրական լեզվի նորմավորման հարցում նախ և առաջ այս վերապահությամբ պետք է ընդունել։ Գրական լեզվի հետագա քերականական մշակման մտահոգությունը մի զգալի չափով դարձյալ նույն մտահոգությանն է ենթակա. «Քերականներու և կարող գրագետներու գիտակից ու լուրջ գործակցության շնորհիվ պետք է վերջնականապես մաքրել լեզուն գրաբարի և գավառաբարբառների քերականական ձևերեն, ձգտիլ հաստատել հոլովումի, հոլովի, խոնարհման և այլն անփոփոխ օրենքներ, լեզու մը պարտական է ունենալ անհեղիի, անխաթար կանոններ՝ զերծ ամեն գրողի քմահաճույքեն։ Այս կետին մեջ անհրաժեշտ է առաջնորդ ունենալ քերականություն մը, որ օրինագիրք ծառայե հրապարակագրին և բանաստեղծին, վիպագրին և գիտնականին հավասարապես» (էջ 125)։

Բայց սա հարցի միայն մի կողմն է՝ այսպես կոչված զուտ լեզվաբանականը։ Մինչդեռ Գ. Վարուժանի դիտարկումների էությունը այս պարագային (նկատի ունենք գրական աշխարհաբարի նորմավորման խնդիրը) դուրս է զուտ «լեզվականի» սահմաններից։

Դժվար չէ նկատել, որ վերը շարադրվածում և առհասարակ Վարուժանի լեզվագեղագիտության մեջ լեզվի գործառական տարբերակները և հատկապես դեղարվեստական լեզուն հստակորեն շեն հանդիպադրվում գրական լեզվին, դիտարկվում են մեկ միասնության մեջ։ Բայց եթե դա ընդհանուր տրամադրություն էր ժամանակի լեզվազգացողության համար, ապա Վարուժանի (թեև ոչ միայն Վարուժանի) լեզվագեղագիտության մեջ դա որոշակի մոտեցման արտահայտություն էր։ Ծվ գրական հայերենի կանոնարկմանը վերաբերող հարցադրումներում բնավ էլ հենց այնպես չեն հնչում գրական սեռերին, թեմային, տեսակին վերաբերող խնդիրները։ Ավելին։ Առաջ է քաշվում նաև «գիտական սեռերուն մեջ» կիրարկվող աշխարհաբարի խնդիրը։ Այն իր զար-

գացմամբ հետ է մնում ընդհանուր լեզվական առաջընթացից, դրսևորում է «այլակերպություններ»։ Եթե գրական աշխարհաբարը թոթափել է զուտ գրաբարյան ձևերը, ապա գիտական գրականության մեջ դրանք դեռ շարունակվում են անհարկի գործածվել, պակասում է «գիտական բառերու պաշարը»... Եվ ապա ընդհանրացումներ, որոնք հնչում են անհամոզիչ թվացող խստություններ։ «Իր մշակման հալոցին մեջ տակավին խայտաբղետ է անիկա։ Ամեն իրական, և գիտական սեռերը իրենց հատուկ լեզուները կը գործածեն, զոր ի մի հավաքելով՝ շենք կրնար ունենալ իր ձևերուն, իր հատկանիշներին և իր քերականության մեջ ամբողջացած լեզու մը» (էջ 123)։

Որ այդ անհամաչափությունը գոյություն ունեի առարկայորեն, և որ առհասարակ լեզվի գործառական տարբերակների զարգացման անհամապատասխանությունը միանգամայն օրինաչափ է ու բնականոն, սա վեճ չընդունող ճշմարտություն էր նաև Վարուժանի համար։ Բայց նույն վարուժանական ըմբռնումների տեսանկյունից միանգամայն անվիճելի է և այն, որ գրական հղկված ու մշակված լեզվի հաղթանակը ենթադրում է նրա գործառական տարբերակների, մասնավորապես գեղարվեստական լեզվի զարգացման շատ որոշակի մակարդակ։ Ունե՞ր գրական արևմտահայերենը այդ մակարդակը։ Ինչպես տեսնում ենք, Վարուժանի պատասխանը միանշանակ չէ, մանավանդ, նրբ խոսքը վերաբերում է գեղարվեստական լեզվին կամ գրական լեզվի գեղագիտական մշակմանը։ Այստեղ արդեն խոսում է բանաստեղծ-գեղագետի՝ ճաշակն ու զգացողությունը, և զարգացվում է շատ ուշագրավ հայացք ազդային հոգեբանության և լեզվագեղագիտության կապի շուրջը։

Լեզուն ազգային գոյության պայման է ու գոյության ձև և է նախ և առաջ իբրև մտածողության ու հոգեբանության արտահայտման միջոց՝ ազգային հոգեկերտվածքի բոլոր դրսևորումներում։ Հետևաբար գրական լեզվի հաղթանակը ենթադրում է նաև ազգային հոգեբանության այսպես կոչված լեզվագեղագիտական յուրացման հաստատումներ։ Արևմտահայ մտավոր նորագույն՝ գեղապաշտ սերնդին հատուկ այս մտածողությունը միանգամայն հարազատ էր վարուժանական լեզվազգացողությանն ու ընկալումներին, և ինքը՝ Վարուժանը, այդ մասին իր կարծիքը ձևակերպում էր՝ սերնդի վերաբերմունքն ընդգծելով. «Մենք ազգի մը լեզուն ճոխ ու կատարյալ կը համարինք այն ատեն միայն, երբ ան ընդունակ է հաջող կերպով պատկերելու այդ ազգին մեծամասնության հոգեբանությունն իր բոլոր երանգներով, երբ մյուս մասամբ կը պահե իր մեջ նկարագիրը այն նախնիներուն, որոնց բերնին մեջ կազմավորված է իր նախնական ձևը» (էջ 121)։

Վերը նշված հեղինակների (Զոհրապ, Սիպիլ, Ինտրա և ուրիշներ) ստեղծագործությունը՝ իբրև հոգու և հուզումի զուսպ ու հավաստավոր պատկերում, զգացումի երանգառատ քնարերգում կամ նիրվանային նուրբ խոհ՝ իբրև ազգային հոգեբանության լեզվագեղագիտական յուրացում, արտահայտությունն էր ազգային խառնվածքի շատ ուռուչակի հատկանիշների ու նրբերանգների. ռմբոստ ընդվզումի շեշտերը, հայկական ընդդիմադիր ոգու դյուցազներգումը փնտրվում էր «բանին» թաքուն խորքերում։ Եվ միայն այս իմաստով չկար «գավառը», «ուր ժողովրդի հոգվույն ամբողջականությունը կ'ապրի»։ «Այն լեզուն, — շարունակում է Վարուժանը, — որ իր ծոցեն հեռու կը սաղմնավորեր, անշուշտ պիտի չկրնար արտահայտել այն մեծ իտեալները, այն վսեմ պատկերներու դյուցազներգությունները, որոնք իր մարդուն և իր հողին կը պատկանին։ Այդ լեզուն իսկապես շունեցավ ժողովրդի մեծ սրտին տիեզերական բաբախյունները, թեպետև, խոստովանինք ան շատ հաջող, շատ մանրազնին ուրվագծեց ջղայնությունը ենթակայական հուլզերու» (էջ 122—123)։

Ըստ Վարուժանի, այդ կորովն ու ուժը լեզվին պիտի հաղօթի դյուցազ-

ներգակ բանաստեղծությունը, ուզմի ու ընդվզումի երգը: «Ծվ դյուցազներգություններն են արդեն, որ լեզվին ապահոված են վերջնական հաղթանակը: Այսպես եղած է գրեթե բոլոր աղգերու լեզվական պատմության մեջ» (էջ 124): Այս մոտեցմամբ գրական արևմտահայերենի բառապաշարի զարգացման գործում Վարուժանը կարևոր տեղ է հատկացնում Սիամանթոյին (տե՛ս «Յարձանյանի քերթողությունը», էջ 160—163):

Ազգային-հոգեբանական և գեղագիտական նրբերանգներ ունի նաև բանաստեղծի անհաշտ ընդդիմությունը դարասկզբի արևմտահայ արձակի («վիպագրության») լեզվի նկատմամբ, որ չի խնայում նույնիսկ բացառությունները՝ Քլկատինցի ու Զարդարյան («անոնք ալ տակավին չեն կրցած ամբարել և գործածել ամեն ինչ որ ժողովրդին կը պատկանի»): Դարձյալ նրան մտատանջողը ազգային հոգեխառնվածքի գեղագիտական ամբողջական յուրացումն է: Ահա նրա բացատրությունները. «Եթե մեր աշխարհաբարին այժմյան ձևովը զավառի կյանքեն վեպ մը փորձենք գրել, պետք ենք վստահ ըլլալ, թե պիտի չհաջողինք, անոր միայն մանրանկարը պիտի կրնանք տալ: Պատճառը բացորոշ է. մեր աշխարհաբարը թեպետև այդ կյանքեն ձևունդ առավ, բայց իր զարգացումը անկէ հետու և անոր հակոտնյա ուղղությամբ տեղի ունեցավ: Ան շունի իր մեջ ոչ հարկ եղած բառերը, ոչ ասացվածքներն ու երանգները՝ զավատի հոգեբանությունը նկարելու համար ճշտորեն» (էջ 122—123):

Նույն սկզբունքներով է առաջնորդվում Դանիել Վարուժանը, երբ անդրադառնում է գրական արևմտահայերենի հետագա զարգացման կամ «մշակման» խնդրին: Գրական աշխարհաբարի նորմավորումը և գեղարվեստական մշակումը դիտելով անբաժանելի միասնության մեջ՝ նա առաջադրում է լեզվի մշակման համապատասխան ուղղություններ՝ պայմանադրապես և բարեշքումով: Առաջինը նկատի ունի կայուն քերականական նորմերի ու կանոնների հաստատումը, երկրորդը՝ լեզվի ներքին արժեքը՝ լեզվական միջոցների ոճական կիրարկումները, լեզվի գեղագիտական մշակումը: Առաջին դեպքում Վարուժանը հաստատուն լեզվակա՛ն նորմայի ամենահետևողական պաշտպանն է: Երկրորդը, ըստ Վարուժանի, չի ենթարկվում լեզվական-քերականական որևէ պայմանադրականության կամ լեզվական նորմայի բացարձակ կանոնին: Լիակ ֆերականությունը հպատակվելու վերը նշված պահանջը, անշուշտ, նկատի շունի խոսքի ոճական նորման: Այստեղ Վարուժանի դիրքորոշումը դարձյալ շատ հստակ է ու ենթակա նրա լեզվագեղագիտության ընդհանուր համակարգի սկզբունքներին: Նույն տրամաբանությամբ լեզվի «բարեշքման» կարևորագույն ասպարեզներ կամ աղբյուրներ են նշվում բարբառը և գրաբարը: Քանզի, եթե առաջինը լեզվին հաղորդում է (կամ կհաղորդի) առավել հայեցիություն ու հոգեբանական ամբողջականություն, ապա երկրորդը՝ «կենեղուտ առուգություն» և ազնվատոհմ նկարագիր (գրաբարի մեջ, Վարուժանի համոզմամբ, արտացոլված է նկարագիրը այն տոհմին, «որուն արյունը սեպուհ էր և ազնվական շառավիղ»): Այս համադրության և այս կրկնակ ազդեցությունների պարագային միայն, ըստ Վարուժանի, գրական հայերենը իրավունք պիտի ունենա համարվելու սեփականությունը հայ ժողովրդի. «դառնալու այն գոգավոր հայելին, որուն մեջ ամփոփված ըլլան բոլոր ընտրված ճաճանչները տոհմիկ անցյալին ու եղբրական, բայց ըմբոստ ներկային» (էջ 126):

Այսպիսով, Գ. Վարուժանի դիրքորոշումն առավելապես գեղագիտական է. գրական աշխարհաբարի ձևավորմանն է անդրադառնում նա, թե լեզվի կայուն նորմերի հաստատմանը, գործառական ոճերին, թե լեզվի գեղագիտական մշակմանը՝ առաջնորդվում է բանաստեղծ-գեղագետի ճաշակով ու զգացողու-

թյամբ, գեղապաշտ արվեստագետի մտահոգություններով: Եվ ահա գեղագիտական այդ մեկնակետը ակտիվ շարժման մեջ է դնում լեզվական խնդիրների քննարկումը՝ դրանք փոխադրելով խոսքային մակարդակ՝ ոճաբանական դիտարկումների ոլորտը, և հակառակը՝ գեղարվեստական ոճին առնչվող իրողությունները երբեմն հանձնվում են զուտ լեզվականի օրինաչափություններին: Ստուգծվում է լեզվաոճական դիտարկումների յուրօրինակ համադրականություն, ուր գեղագիտական ելակետը անպայման միտում է նաև ազգային-գեղագիտական նպատակադրումների: Այսպիսի մոտեցումն իր հերթին ենթադրում է ոճական-ոճաբանական խնդիրների առավել հետևողական ու հանգամանալից քննարկում, ինչ և կատարում է բանաստեղծը: Լեզվի գեղագիտական մշակման վերաբերյալ հարցադրումները և առհասարակ բարեշրջումի ուղին արդեն իսկ ոճաբանական բացահայտումների ճանապարհն է: Իրանով հանդերձ Վարուժանը հակված է առավել կոնկրետ ու հստակ վերլուծությունների, երբ առարկան ոճական-գեղագիտական բովանդակություն ունի⁶: Միշտ չէ, որ այդ վերլուծություններն աչքի են ընկնում անպայման գիտականությունամբ (դու ավելի հաճախ նպատակ չի եղել հեղինակի համար), միշտ չէ, որ գնահատումներն անկողմնակալ են ու «սկսնակներուն» տրված «հորդորները»՝ անվիճելի: Բայց անվիճելի է այդ վերլուծությունների ու գնահատումների նշանակությունը այլ առումներով. դրանք գալիս են ամբողջացնելու Վարուժան լեզվագեղագետի հայացքների համակարգը, անշուշտ, նաև բնութագրելու ժամանակի արևմտահայ լեզվագեղագիտական միտքը և ապա՝ էական նպաստը բերելու նաև ժամանակակից «սկսնակներուն»: Ոճի լեզվական ըմբռնման, հատկանիշների, գեղարվեստական տեքստի կառուցման յուրահատկությունների, գրելակերպի ինքնատիպության, բանաստեղծական պատկերի կառուցման, շափի ու ուժի զգացողության և այլ ոճաբանական-գեղագիտական խնդիրների վերաբերյալ արևմտահայ նշանավոր բանաստեղծի հաստատումները շատ կողմերով այսօր էլ արդիական են և ուշադրության արժանի:

Այդ հաստատումները, որոնց առարկան գեղարվեստական ոճն է և միայն գեղարվեստական ոճը, կրում են ոչ միայն եվրոպական լեզվագեղագիտական մտքի ազդեցությունները (Վարուժանը ամենայն հավանականությունով ծանոթ էր եվրոպական մտքի որոնումների նաև այդ հատվածին), այլև բխում են սեփական գեղարվեստական փորձից և արդյունք են ստեղծագործական բուռն ու տևական որոնումների: Այդ են վկայում նրա քերթողական ժառանգության բարձր արվեստը, այլև հենց այդ դատումների որոշարկված բնույթը, ձևակերպումների ավարտուն և անվերապահ եղանակը, որոնք նրկատելի են նույնիսկ տեսական հարցադրումներում, և որոնք բանաստեղծն իր հերթին հաստատում է հայ գրականությունից քաղված շատ բնորոշ օրինակներով:

Ոճաբան-լեզվաբանների՝ ոճի լիարժեք ու ավարտուն բնութագրման ջանքերը այսօր էլ մնում են փորձի սահմաններում և վերջին հաշվով հանգում ոճի բնութագրմանը՝ ըստ նրա ամենաընդհանուր հատկանիշների: Ինչպես Վարուժանի՝ բանաստեղծ-արվեստագետի ջանքը, որ հասկանալիորեն զգայական-անհատական նրբերանգներ ունի ու անպայման գեղագիտական նպատակադրում, առավել քան ենթակա է նույն օրինաչափությանը:

⁶ Տե՛ս նրա հոդվածներն ու ելույթները՝ «Եղիի» բացած գրական մրցումը, «Կծու խոսքեր», «Հայ լեզվի խնդիրը», «Գրական դպրոցներ», «Յարճանյանի քերթողությունը», «Հորիւրներ սկսակներուն», «Պատասխան», ինչպես նաև Ն. Անդրիկյանին, Ա. Չոպանյանին, Ռ. Պապարճյանին, Լ. Էսաճանյանին և այլոց ուղղված նամակները, որոնցում շատ որոշակի է վարուժանական դատումի փորձը (Ռ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, II, 3, Ռ. Վարուժան, Նամականի, Երևան, 1965):

Ոճը բնութագրող նրա ձևակերպումների ու թվարկվող հատկանիշներին բազմազանություն մեջ առանձնանում և ընդգծվում են երեքը՝ ինֆնուրույնություն, կարճաբանություն, ներդաշնակություն: Ըստ որում, առանձնահատուկ նշանակություն է տրվում ու հանգամանորեն է դիտարկվում առաջինը՝ ինֆնուրույնությունը, այլ կերպ՝ անհատականությունը, որը ինքնին գեղարվեստական ոճի ամենաբնորոշ հայտանիշն է: Ահա այդ ձևակերպումներից մի քանիսը. «Ոճը տաղանդին անձնական դրոշմն է, ան որքան ինքնուրույն ըլլա՝ տաղանդը այնքան ավելի ինքնուրույն է», «Մտածում մը գրվածքի կամ խոսքի միջոցով առանձնահատուկ կերպով արտահայտելուն ոճ կ'ըսվի», «Ոճը գրողին անձին հետ այնքան կապ ունի՝ որ իրավացի կերպով ըսված է.— Ոճը մարդն է», «Ճիշդ է, որ ամեն գրողներ իրենց հատուկ ոճը ունին, և սըխալ է անոնցմե մեկունը պարտադրել ամենուն» և այլն:

Արդ, ի՞նչ է անհատականությունը, ի՞նչ ասել է ինքնուրույնություն: «Ինքնուրույնությունը կը կայանա մասնավորապես բան մը առանձնահատուկ կերպով ըսելու, գաղափարը նոր ձևով ցայտեցնելու մեջ»,— բացատրում է Վարուժանը: Չպետք է գրել «կաղապարյալ ոճով», առանց պատկերի ու արտահայտության, առանց հուզումի, հասարակ բացատրություններով, որոնք հաճախ վերամբարձ են կամ մթազնած են պահում ճշմարտությունը, Բառը, պատկերը, արտահայտությունը շատ գործածելուց հնանում են, կորցնում արտահայտչականությունը: Եվ եթե ամենամոտ անցյալում հայ բանաստեղծության մեջ հաջողված պատկեր, մակդիր, ինքնատիպորեն հղացված բացատրություններ էին «սիրտը բացավ», «ազատության արև», «շնորհալի աչքեր», «դիմագիծներուն նրբությունը», «վիշտերու հովիտ», «արյունի և արցունքի հեղեղներ» և նման ասությունները, ապա այսօր դրանք ակնհայտորեն կորցրել են իրենց արտահայտչականությունը, հնաբույր են ու հասարակաբան: Ճշմարիտ գրողը պետք է կարողանա շունչ տալ դրանց, կենդանացնել, «գեղեցկորեն նորոգել», ինչպես Թերզյանի պարագային.

Որոնց արյան ու արտասված րեղեղներ
Սընուցանեն Ընցա գլխուց դափնիներ:

«Արյունի, արցունքի հեղեղը» մաշած ու ճոռոմ բացատրություն մը եղած է,— մեկնում է Վարուժանը,— բայց երբ կըսեմ, թե ան կը սնուցանե դափնիներ՝ այդ բացատրության իմաստը բարձրացուցած կ'ըլլամ, ու հետևաբար՝ գեղեցկորեն նորոգած» (էջ 200):

Եվ կա երկրորդ ճանապարհը ճշմարիտ բանաստեղծության. յուրաքանչյուր թաղանդավոր գրող պետք է ստեղծի նորը. նոր պատկերներ, արտահայտություններ, ինչպես է Ռ. Որբերյանի, Պ. Դուրյանի, Ռ. Զարդարյանի, Թլկատինցու, Սիամանթոյի, նաև Ա. Զոպանյանի պարագան, նույնիսկ Ա. Ղազիկյանի թարգմանությունները Հոմերոսից ու Վիրգիլիոսից: Այս հեղինակներից բերված հաստատվածները Վարուժանը իբրև ոճի լավագույն օրինակներ է պարզում սկանակներին:

Ինքնուրույնությունը, այսպիսով, ըստ Վարուժանի, բնական, գեղարվեստականորեն ճշմարիտ պատկերի, անհրաժեշտ բառի ու արտահայտության որոնում-հայտնություն մեջ է, ոճի բնականության մեջ, որ ստեղծվում է անվճար աշխատությամբ և որի ստորոգումներն են ցայտքը (կառույցը), ավյունը, սևղմումը, ճշտությունը, համեմատությունը, բառերի ստեղծագործությունը, պատկերների նորությունը և այլն:

Տեղ ունի՞ այստեղ վարժանքը, ուսուցումը: Վարուժանի պատասխանը միանշանակ է. ձիթը, կարողությունը, տաղանդը, այո՛, ամենագոր ուժ են, յուրաքանչյուր ստեղծագործող ունի իր ինքնուրույն ոճը, գրելու իր ինքնա-

հատուկ եղանակը, բայց բոլոր ոճերի համար կա «հասարակաց եղող արվեստ մը»: Ահա այդ արվեստն է, որ պետք է ուսուցանվի, և որի միջոցով միայն ամեն գրող կարող է իրեն հատուկ ոճը գտնել և գործածել անհրաժեշտաբար:

Այլևայլ առիթներով Դ. Վարուժանը մանրամասնում է իր տեսակետները բառերի հոմանշային տարբերակների ընտրության, դարձվածների ոճական կիրառության, պերճախոսության, գեղարվեստական ոճի այլ հատկանիշների ու կողմերի մասին՝ առավելաբար նպատակ ունենալով նորագույն սերնդին՝ «սկսնակներուն», ուսուցանել ոճի «հասարակաց եղող արվեստը», որը ըստ նրա նորագույն բանաստեղծության ճանապարհն է:

Դարասկզբին հայ լեզվաբանական միտքը և առհասարակ մտավոր կյանքը հուզող խնդիրներից մեկը գրական հայերենի երկու հատվածների փոխհարաբերության հարցն էր: Այն դարձել էր մշտական բանավեճերի ու քննարկումների առարկա ժամանակի պարբերական մամուլի («Արարատ», «Անահիտ», «Մասիս», «Արևելք») էջերում: «Ազատամարտ» շաբաթաթերթի բացած բանավեճին («Հայ գրական լեզվի խնդիրը», 1911) մասնակցեցին և՛ արևմուտահայ, և՛ արևելահայ ճանաչված մտավորականներ՝ Ղ. Աղայան, Ա. Հարությունյան, Շիրվանզադե, Հովհ. Գազանճյան, Ա. Չոպանյան, Ս. Զթլյան, Բերունի, Միք. Վարանդյան, Հակոբ Քյուֆեճյան (Օշական), Վրթ. Փափազյան և ուրիշներ: Տուրք շտաբով երկուստեք բավական տարածված՝ երկու գրականները իրար հակադրելու կամ «ձուլելու» քմահաճ հարցադրումներին՝ Վարուժանը հիմնականում զարգացնում է առարկայական ու անաչառ հայացք երկու հայերենների՝ տարբեր միջավայրերի ու քաղաքակրթության ազդեցություններով ձևավորված յուրահատկությունների մասին: «Ահա արևմտյան աշխարհաբարը, գրեթե մաքրված գրաբարի մղղանքներին, բայց անոր շատ մոտ իր ներքին արժեքով, բառերով ու ոճերով. իր ձևերուն մեջ այլազան ու բազմատարազ. վիպին մեջ մեղկ, ստեպ սահուն. հզոր՝ քերթողներու և հրապարակագիրներու գրչին տակ և ընդհանրապես՝ զղուտ: Իսկ ահա արևելյան աշխարհաբարը՝ մյուսեն գրեթե հակոտնյա իր մշակումով. վեպերուն մեջ բրնական, ժողովրդական ու գերազանցորեն քաղցրահնչյուն. իր քերթողության և լրագրության մեջ ավելի հոտտորական, քան թե հզոր, ավելի վարդապետական, քան թե իտեալական...»:

Այս բնութագրումների ինչ-ինչ կողմեր ու առումներ, անշուշտ, կարելի է վիճարկել, կարելի է չհամաձայնել առանձին արևելահայ բանաստեղծների լեզվին տրված ե՛լջակայական դիահատումներին, բայց պետք է նկատի ունենալ, որ խոսքը երկու գրականների առանձնահատկությունների մասին է. ընդհանուր առմամբ դրանք դիտվում են մեկ միասնական լեզվի դրսևորումներ, որոնց հիմունքը խորապես ազգային է, հայկական: «Այդ երկու բարբառներուն սրտուկը գերազանցապես հայ է.— գրում է Վարուժանը,— քանզի հայ ցեղին հոգիեն և նախնիներու լեզվին բունեն ճյուղավորված են» (էջ 127—128):

Իրավացի է դարձյալ Վարուժանը, երբ սկզբունքորեն մերժում էր երկու գրական հայերենների ամեն մի պայմանադրական ձուլում, որն անտեսում

¹ «Ձուլումի» պահանջը (Բերունի, «Մեր լեզուն և անոր մշակման խնդիրը», «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1911, թիվ 26, Կ. Բասմաջյան, «Հայ գրական լեզվի խնդիրը», Գ. տ. թիվ 40), կամ երկու գրականները փոխադարձ զիջումներով (Պ. Վանցյան, Երկու խոսք մեր գրաբարադատների միության մասին, «Անահիտ», Փարիզ, 1898, Ա. Չոպանյան Արդի նաչերենը, Գ. տ., 1902, թիվ 6, 1903, թիվ 1, 5), Գույնիակ միակողմանիորեն (Մ. Աբեղյան, «Արարատ», Էջմիածին, 1897, թիվ 8) իրար մերձեցնելու մտահոգությունը ուներ առավելապես հայրենասիրական մղումներ և չունեցավ հեռանկար:

է նշված առանձնահատկությունները և արդելապատճառները՝ քաղաքական կացությունը, ժողովուրդը, այսինքն այդ լեզվով հաղորդակցվող հասրությունը, որի համար տվյալ լեզուն արդեն որոշակիորեն ձևավորված մտածողության ու հոգեբանության արտահայտություն է, և գրականությունը, հոգևոր կյանքը, որ զարգացել է դարձյալ տարաբնույթ մշակույթների ու քաղաքակրթության ազդեցություններով: «Զուլումը» հնարավոր է միայն աստիճանաբար զարգացմամբ՝ «բարեշրջման օրենքով», որն իր հելլիսն ենթադրում է «ժողովրդական ամբողջ զանգվածների ցնցող» դեպքեր և հանգամանքներ, որոնց ընթացքը կանխապես գուշակել անհնար է: Արտալեզվական գործոնի՝ քաղաքական-աշխարհագրական «ձուլումի» պայմանը, անվերապահ է: Հետագա տասնամյակների անհեռանկար ծավալումը եկավ հաստատելու վարուժանի (և նրա շատ ժամանակակիցների՝ Ա. Շիրվանզադե, Հ. Քյուֆեճյան, Վրթ. Փափազյան, Հր. Աճառյան և ուրիշներ) համոզումը:

Եվ վերջապես, վարուժանը սկզբունքորեն չի էլ մերժում արդեն շրջահառության մեջ գտնվող այն տեսակետը, որ բնավ էլ պարտադրական ու անպայման չէ երկու մշակույթների կամ լեզուների «ձուլումը», քանզի իբրև ուրույն արժեքներ, դրանք «ունին շատ մը մեկմեկե առավելություններ ու գեղեցկություններ» և կարող են գոյություն ունենալ ու զարգանալ՝ փոխադարձաբար օգտվելով միմյանցից, հարստացնելով իրար:

Երկու գրականների փոխհարաբերության հարցում ևս վարուժանական մտորումների առանցքը նաև գեղագիտականն է. ոչ մի անպատեհություն չըտեսնելով ուրույն գրականությունների ու լեզուների գոյության մեջ՝ վարուժանը այն միտքն է զարգացնում, որ հայ ժողովրդի հոգեբանության «զանազան երեսները», «այլազան կարողություններն ու գեղեցկությունները» լույսի բերող երկու գրականների «ձուլումը» գեղեցիկ ներդաշնակություն կարող է կազմել գեղարվեստական տեքստում, գրականության մեջ. «Եվ ո՞չ ապաքեն ամենեն ավելի գեղեցիկ ներդաշնակությունը զանազանության մեջ կը հորինվի» (էջ 130): Գրականության ընթացքը հաստատեց նաև այս ճշմարտությունը. Ավետիս Ահարոնյանի, Վրթ. Փափազյանի, Կ. Զարյանի, Վ. Թոթովենցի, Վահրամ Փափազյանի և ուրիշների գրվածքներում բարձրարվեստ համադրումի մեջ են արևմտահայ և արևելահայ գրականների լեզվատարբերը:

Անկասկած է, որ վարուժանի լեզվագեղագիտական փորձը այսօր շատ առումնիհրով միանգամայն համոզիչ է, այժմեական: Առանձին հարցադրումներ կարող են թվալ շատ հայտնի ու սովորական: Սակայն գրական լեզվի նորմավորման և գեղարվեստականացման շրջանում, երբ լեզվի գեղագիտական յուրացումը նոր-նոր ձևավորվող երևույթ էր, վարուժանական այդ հարցադրումները ճանապարհ էին հարթում, ուղղություն տալիս և արևմտահայ նորագույն բանաստեղծության լեզվաորակը մղում զարգացման լայն ճանապարհ:

Ю. С. АВЕТИСЯН — Языково-эстетические взгляды Даниэла Варужана.— На основании статей, писем и художественных произведений выдающегося западноармянского поэта Варужана делается попытка систематизировать его отношение к нормированию западноармянского языка, путям его художественной обработки. Эти принципы и представляются в обобщенном единстве.